

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՏԱԹԵՎԻԿ ԳՐԻԳՈՐԻԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԺԴ-ԺԷ ԴԴ. ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժ. 02. 01 – «Հայոց լեզու» մասնագիտությունը ամբ
բանասիրական գիտություններին թեկնածուի գիտական
աստիճանի
հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսություն թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական
դոկտոր լեզուներին

դոկտոր, պրոֆեսոր

Լ. Ս. Զովսեփյան

բանասիրական
տոլթյունների
դոկտոր

Գ. Ս. Մուրադյան

բանասիրական
տոլթյունների
թեկնածու, դոցենտ

Ն. Բ. Պողոսյան

Խ. Աբովյանի անվան
այլակերպական
պետական մանկավարժական
համալսարան

Պաշտոնական
ադրիմախոսներ՝

Առաջատար
ազմակերպիչ ունե՝

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. ապրիլի 3-ին, ժամը՝
15⁰⁰ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող
ԲՈՂ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, 0015, Գ. Լուսավորչի 15:

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մարտի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ն.Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

ՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԵՆՈՒԹԱԳԻՐԸ

ՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հայ երեւն ձեռնագրերու մ ամկա է քերականագիտական հարուստ ժառանգությունն, որը հիմնականում ուսումնասիրված է, սակայն դեռևս կան չբացահայտված շատ հարցեր: Չնայած հրատարակվել են տարբեր քերականների աշխատություններ, կազմվել համեմատական ու քննական բնագրեր, այդուհանդերձ լեզվաբանական տերմինների քննու-թյան առումով այս բնագավառը ըստ պատշաճի ուսումնասիրված չէ: Չհրատարակված ձեռագիր սկզբնաղբյուրներում պահպանված լեզվաբանական տերմինների հետազոտության անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է սույն աշխատանքի արդիականությունը:

ՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Աշխատանքի նպատակն է հայ երեւն չուսումնասիրված-չհրատարակված ձեռագիր սկզբնաղբյուրներից առանձնացնել քերականական տերմիններ և կատարել դրանց լեզվաբանական ամբողջական քննություն: Այդ նպատակը իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ խնդիրները.

- ա) լեզվաբանական տերմինների առաջացման ու ձևավորման պատմության ներկայացում՝ իր գարգացման շրջաններով,
- բ) տերմինների ծագումնաբանական շերտերի, համալրման ու դիների և աղբյուրների քննություն,
- գ) տերմինների իմաստակառուցվածքային և գործառնական վերլուծություն:

ՈՒՍՈՒՄՆԱԽԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԱՐԿԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԿԱՆՑ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ: Ուսումնասիրության առարկան լեզվաբանական տերմիններն են: Այս ուսումնասիրության ընդգրկած ժամանակաշրջանը ներկայացված է միայն ձեռագիր մատյաններով: Ձեռագրերում հանդիպում են երկու հարյուր քսանհինգ տերմին, որոնց զգալի մասի վերաբերյալ չկա վկայություն: դրանք չեն արձանագրվել հետա-գա բառարաններում, և միայն մեր աղբյուրներն են հնարավորությունն տալիս դրանք մեկնաբանելու: Կան նաև փոքր թվով այնպիսի տերմիններ, որոնք հանդիպում են նաև մինչև այժմ ուսումնասիրված աշխատություններում, և որոնց տարբեր առիթ-ներով անդրադարձել են լեզվաբանները, սակայն մեր կողմից ընտրված ձեռագիր աղբյուրներում այդպիսի տերմինները հանդես են գալիս որպես միևնույն տերմինի ավելի վաղ, կամ այլ իմաստով կիրառություն, կամ էլ հնչյունական և բառակազմական նոր տարբերակներ: Ուսումնասիրության աղբյուրները ԺԴ-ԺԵ դդ. մի շարք ձեռագիր մատյաններն են, որոնք քննել ենք որպես քերականական սկզբնաղբյուր-ներ՝ նկատի ունենալով դրանց պարունակած նյութը: Որպես տեղեկատու աղբյուր օգտագործել ենք նաև ձեռագրացուցակները:

ԱՍԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՐԸ:

Առաջին անգամ քննություն են եկթարկվում ձեռագրերից դուրս հանված երկու հարյուր քսանհինգ նորահայտ տերմին, կատարվում է դրանց բաղադրիչների հմաստարանական, կառուցված-քային և գործառնական վերլուծություն, ներկայացվում է լեզվաբանական տերմին-ների առաջացման ու ձևավորման պատմությունը՝ ըստ առանձին շրջանների:

ՈՒՍՈՒՄՆԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ:

Ատենախոսությունը գրված է հա-յ ազիտության մեջ ընդունված՝ արդի բանասիրության և քերականագիտության տեսական-մեթոդական սկզբունքներով: Օգտագործված են թեմային առնչվող հայ և այլազգի անվանի բանասերների, լեզվաբանների, քերականագետների, լեզվի տարբեր շրջաններով զբաղվող հայագետների աշխատությունները և նրանց ելակետ-տային դրույթները: Կիրառվել են համեմատական, գուգարական վերլուծության մեթոդները՝ բերված փաստերը հիմնավորելու և ճշգրիտեզրահանգումներ կատարելու համար:

ԱՍԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԿԱՆ

ՆԵՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հայերենի քերականության պատմությունն իր հիմնական անցումներով, փուլային առանձնահատկություններով հայտնի է և ուսումնասիրված, սակայն այդ շղթան լրացնելու ձեռագրային նյութը չի սպառվել և լեզվաբանական նյութը ուսումնասիրության չի ենթարկվել: Մի շարք քերականական բնագրեր դեռևս գիտական շրջանառության մեջ դրված չեն. ընտրել ենք այդպիսի 16 ձեռագիր, որոնք պահվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատանը, և մեկը՝ Չմամաի վանքի մատենադարանի հիմնական հավաքածուում¹: Քննել ենք այդ աղբյուրներում վկայված տերմինները՝ նկարագրելով դրանց բնույթը, կառուցվածքային և բովանդակային հիմնական հատկանիշները: Այս առումով սույն աշխատանքը ամբողջական փորձ է այդ բացը լրացնելու ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հայագիտության բնագավառում կատարվելիք հետագա աշխատանքներում, հատկապես միջնադարյան քերականագիտության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում:

ԱՍԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները արտացոլված են

¹ Ուսումնասիրվող ձեռագրերից նյութերի ընտրության, աշխատությունների ժամանակի և տեղի մասին տվյալները քաղել ենք Մաշտոցյան Մատենադարանի և Չմամաի վանքի մատենադարանի ձեռագրացուցակներից, ինչպես նաև Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի «Մայր քարտարանից» և «Մայր մատյանից», որոնք հաճախ ճշգրտված են մեր և Մատենադարանի «Ձեռագրագիտության և Մայր ցուցակի» բաժնի մյուս աշխատակիցների ուսումնասիրությանը ներկայացրած հիմնական վրա:

հրատարակված վեց հոդվածներում և հանրապետական ու միջազգային գիտածոողովներում կարդացված գեկու-ցու մներում: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստի-տուտի հայոց լեզվի պատմության թաժնում և երաշխավորվել հրատարակայ ին պաշտպանության:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսության

կառուցվածքը բխում է առաջադրված նպատակներից, քննարկվող խնդիրներից և արդյունքներից: Այն բաղկացած է ներածության և նից, երեք գլխից՝ համապատասխան ենթազվ ու խնդրով, եզրակացության և ներքից, օգտագործված գրականության ցանկից, հավելված-ներից (առաջին հավելվածը ձեռագրերից դուրս բերված լեզվաբանական տերմին-ների պարբերական ցանկն է, երկրորդը՝ ատենախոսության մեջ հիշատակված քերականների անվանացանկը, իսկ երրորդը՝ ՄՄ 2335 և 5619 ձեռագրերում առկա քերականական ծառերի մանրակարները): Ատենախոսության ծավալը 152 է է:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ներածության մեջ արծարծվում են տեսական բնույթի միջառք հարցեր: Ելնելով ուսու մնասիրու-թյան նյութից՝ նախհարկ ենք համարել անդրադառնալ տերմինաբանությանը և տերմինի ըմբռնմանը հայ լեզվաբանության մեջ:

Իբրև բառապաշարի մի մաս՝ տերմինաբանությանը ևս պատմական գար-գացման ընթացքում ենթարկվել է ներլեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությանը: Գիտական հասկացությունների և նրանց հատկանիշների ուսում-նասիրությանը գրադրում է տերմինագիտությանը: Տերմինագիտությանը՝ որպես բառապաշարի գիտական ուսումնասիրության ինքնուրույն բնագավառ, ժամանակի ընթացքում ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ ենթարկվում է մշակման ու կատարելագործման: Տերմինագիտության հետազոտության առարկան տերմինն է, որը՝ որպես լեզվի բառային կազմի բաղկացուցիչ մաս, ընդգրկում է գիտու-թյան բոլոր բնագավառներին վերաբերող գիտաբաները՝ իրենց հասկացական իմաստներով և գործառական դաշտով: Ըստ այդմ՝ մեջ ենք բերել տերմինագիտու-թյան բնագավառում հայ և այլազգի հեղինակների ըմբռնումները՝ Ռ. Իշխանյան, Ս. Ասլանյան, Ա. Սուքիասյան, Ա. Մուրադյան, Ռ. Բուդաղով, Ե. Գալկինա-Ֆեդորով, Դ. Ուշակով, Ս. Օժեգով, Վ. Դալ և այլք: Անդրադարձել ենք նաև հունաբան և լատի-նաբան դպրոցներին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ երկուսն էլ իրենց կարևորագույն բաժինն ունեն հայերենի քերականական տերմինակերտման գործում: Ե՛վ հունաբան, և՛ լատիսաբան հայերենները շուրջ երկու դար գոյատևել են՝ լինելով ժամանակի մտավորական որոշակի խավի լեզուն. հունաբան հայերենը սկիզբ է առել Հայաստանում թարգմանչական

աշխատանքի ընթացքում, մինչդեռ լատինաբանը սկզբնավորվել է Եվրոպայում և տարածվել այլ նպատակներով: Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայերեն թարգմանությամբ առաջին անգամ ստեղծվեց հայերեն համակարգված քերականական եզրաբանություն: Այն շուրջ մեկ հազարամյակ եղել է հայ քերականների մեկնությունների առարկան. դրա շնորհիվ աշխատության եզրաբանությունն ունեցել է կարևոր պատմական նշանակություն հայ քերականագիտության ասպարեզում և ոչ միայն դարձել է հայ քերականությունների եզրաբանության հիմնական կորիզը, այլ և մինչ օրս էլ շարունակում է գործել լեզվաբանական-քերականական գրականության մեջ: Թարգմանչի աշխատությունն այն հիմնաքարն էր, որի վրա հենվեցին հետագա քերականների մեկնողական երկերը, որոնց հեղինակներն էին Դավիթ փիլիսոփան, Մովսես Քերթոզը, Անանունը, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Յամամ Արևելցին և այլք:

Այնուհետ խոսում ենք անտեսխոսության սկզբնաղբյուր ձեռագրերի և նրանց ընտրության հիմնավորումների մասին՝ շեշտելով բոլոր այն հատկանիշները, որոնց շնորհիվ դրանք առաջին անգամ դրվում են գիտական շրջանառության մեջ:

Ձեռագրերը հայ ժողովրդի ստեղծած այն արժեքներից են, որոնք մշակույթի հարատևմասունքներն են, պատմության վկանանցյալ դարերից: Աշխատանքի մեջ քննվող տերմինների մեծ մասը հունաբան և լատինաբան տերմինների փոխառություն և պատճենման «արդյունք» է:

Սույն աշխատանքի համար նախապես ուսումնասիրել ենք Մ. Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանի և Չմամաի վանքի մատենադարանի ձեռագրերի ֆոնդերը: Մաշտոցյան Մատենադարանի հարուստ ձեռագրական գանձարանից ընտրել ենք 15 ձեռագիր և մեկ ձեռագիր էլ Չմամաի վանքի մատենադարանի Անտոնյան հիմնական հավաքածուից և ուսումնասիրությունը կատարել ենք վերոհիշյալ 16 ձեռագրի շրջանակներում՝ թվագրված ԺԴ-ԺԵ դարերով: Ընտրությունը կատարելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով՝ նախընտրել ենք բոլոր այն ձեռագրերը, որոնք պարունակում են քերականական աշխատություններ: Այնուհետև առանձնացրել ենք չուսումնասիրված, չհրատարակված քերականական աշխատություններ պարունակող ձեռագրերը, ընտրությունն էլ կատարել ենք արդեն հայտնի լեզվաբանների կողմից ուսումնասիրված քերականական աշխատությունների բացառումով: Իսկ ուսումնասիրության սահմանները ԺԴ-ԺԵ դարերն են, քանի որ ԺԴ դարից առաջ ձեռագրերում հանդիպած քերականական բնագրերը ուսումնասիրված են և հրատարակված, իսկ ԺԵ դարով սահմանափակվել ենք անտեսխոսության սահմանված ծավալը չգերազանցելու նպատակով:

Մանրամասն ուսումնասիրել ենք յուրաքանչյուր ձեռագրում մեզ հետաքրքրող քերականական բնագիրը: Բնագրերից քաղել ենք լեզվաբանական այն տերմինները, որոնք

այս մասնականորեն նորահայտ ենք համարում՝ հաշվի առնելով հետևյալը. ա) որևէ նախորդ քերականի կողմից չեն գործածվել, բ) որևէ քերականի օգտագործած տերմինի ավելի վաղ կիրառություն է, գ) որևէ քերականի կողմից գործածված տերմինի բուն իմաստից բացի՝ այլ իմաստով կիրառություն է, դ) որևէ քերականի օգտագործած տերմինի հնչյունական կամ բառակազմական նոր տարբերակ է:

Նշենք, որ բացի երևանի և Չմամառի վանքի մատենադարաններից՝ մյուս ձեռագրական հավաքածուներն ուսումնասիրելիս օգտվել ենք արդեն տպագրված ձեռագրացուցակներից, որոնցում տեղ են գտել մեր ուսումնասիրած ձեռագրերի ընդօրինակությունները: Այդ նյութերը երևանի և Չմամառի վանքի ձեռագրական ժառանգության հետ կազմում են սույն մատենախոսության աղբյուրագիտական-ձեռագրագիտական հիմքը: Աշխատանքի ընթացքում ճշգրտվել են ուսումնասիրություն համար հետաքրքրություններ կայացնող առանձին ձեռագրերի հեղինակներ և ստեղծման հանգամանքներ:

Առաջին գլխում («Միջնադարյան ձեռագիր քերականական աշխատություններ») աղբյուրագիտական-լեզվաբանական, քննություններ, հատկացրել աղբյուրագիտական, ձեռագրագիտական քննությունը, ձեռագիր մատյանների բովանդակային նկարագրությունը: Այստեղ խոսում ենք ընտրված ձեռագրերի ձեռնարկ-դասագիրք լինելու արժեքի մասին. «Քերականական մեկնությունները՝ որպես ձեռնարկ-դասագրքեր, դարեր շարունակ գործածվել են ճեմարաններում, վարդապետարաններում և համալսարաններում, դրանք, բացի բուն քերականական գիտելիքից, ներառել են նաև հարակից իմացություններ, հիմնականում փիլիսոփայական բնույթի՝ վերածվելով յուրատեսակ փոքրիկ «հանրագիտարանների»²: Բովանդակային այդ ընդգրկման հաստատումն են նաև միջնադարյան քերական-ների բնորոշումները. նրանք քերականության յուրացումը համարում էին իմաստասիրության «դուռ և բանալի», գիտելիքի բարձր ոլորտ մուտք գործելու միջոց և հետագա իմացություններին ուղեկից»³: Միջնադարում ուսուցումը դյուրացնելու նպատակով քերականական հասկացությունները տրվում էին հարց ու պատասխանի

² Խաչերեան Լ., Հայ լեզուաբանությունն առաջացման պատմությունը և քերականագիտական միտքը V-XVI դարերում, Լիզպոն, 1992, էջ 3:

³ Եսայի Նշեցի, Վերլուծություն քերականության, ՅՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966, էջ 63, նաև Գրիգոր Մազիստրոս, Մեկնություն քերականին, Մատենագիրք հայոց, հտ. Ժ2 (ԺԱ դար), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 388, Յովհաննես Երզնկացի, Հաւաքումն մեկնություն քերականի, printed by Alco Printing Co, Լոս Անճելոս, 1983, էջ 85:

շարադրանքով, որը կոչվել է կատեխիզիս⁴: Այս գլխում, ըստ կառուցվածքի, առանձնացնում ենք միջնադարյան մեկնություններին մի քանի տեսակ՝ ներհյուսված մեկնություններ, բան-մեկնություններ, հարցարաններ⁵: Ընտրված ձեռագրերում քերականական աշխատությունները, ըստ շարադրանքի բնույթի, բազմազան են. քերականական նյութեր կան ծառերի տեսքով, հարց ու պատասխանի ձևով շարադրված և սովորական շարադրանքով գրված: Մեր հետազոտության նյութ դարձած ձեռագրերը ընդհանուր դասակարգմամբ խմբավորել ենք ըստ ավանդման ձևի և դրանցում առկա քերականական նյութերի ամբողջականության՝ առանձնաց-նելով երեք տեսակ: Դրանց կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկությունները տալիս ենք՝ ըստ նյութի մատուցման եղանակի ու քերականական հարցերի ընդգրկման:

Եւ ենք նաև, որ թվարկում ենք ընտրված յուրաքանչյուր ձեռագրի այլ գրչագիր օրինակները ոչ միայն Երևանի Մատենադարանում, այլ նաև տարբեր ձեռագրական հավաքածուներում⁶: Այս գլխում նաև կատարել ենք հունաբան, լատինաբան քերականների աշխատությունների և մեր բնագրերի համեմատական քննություն-ուսումնասիրություն: Համեմատության մեթոդով յուրաքանչյուր ձեռագրում փորձել ենք պարզել արդեն հայտնի քերականների ազդեցությունը: Բնակա-նաբար ազդեցության առաջին հատկանիշը քերականական տերմինների գործածությունն է, ինչպես նաև որոշ դեպքերում քերականական աշխատությունների կառուցվածքը:

Ա Առանձին ամբողջական քերականական ձեռագրեր: Այս բաժնում քննում ենք այն ձեռագրերը, որոնք պարունակում են մեկ ամբողջական քերականական աշխատություն: Ուսումնասիրության համար ունենք միայն մեկը՝ 2284 թվահամարը կրող ձեռագիրը: Ձեռագրում առկա աշխատությունը բաղկացած է երեք գլխից, և յուրաքանչյուրն էլ համապատասխանաբար բաժանվում է ենթագլուխների: Առաջին գլխում խոսվում է անուն և դերանուն խոսքի մասերի հոլովման, բայի լծորդություն-ների, նաև նախադրությունների, մակբայների, միջարկությունների և շաղկապների մասին:

⁴ Բառն առաջացել է հունարեն ή καθήχσις գոյականից «իրապարակում, (բանավոր) ուսուցում, խրատ», որը ձևավորվել է καθήξω բայից «իրապարակել, (բանավոր) ուսուցանել, սովորեցնել», տես <http://urokirus.com/online/blogs/7433-2011-06-13-13-52-38.html>.

⁵ Դաւիթ Զէյթունցի, Մեկնութիւն քերականի, ՅՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 21-23:

⁶ Գրչագիր օրինակներից մեկի ընտրությունը՝ որպես ուսումնասիրության հիմնական աղբյուր պայմանավորված է ձեռագրի հնագույն, ամբողջական, դյուրընթեմնելի օրինակ լինելու հանգամանքներով:

Երկրորդ գլուխը ներկայացնում է նախադրույթյան և բայի հոլովառույթունը, իսկ երրորդ գլխում մանրամասն խոսվում է քերականության բաժիններից ձևաբանության մասին՝ սահմանումներով, տեսակներով, օրինակներով հանդերձ:

Բ. Ամբողջական քերականական աշխատություններ:

Ամբողջական քերականական աշխատությունները հիմնականում կարելի է գտնել տարբեր բնույթի ժողովածու ձեռագրերում: Այս ենթաբաժնում քննել ենք ութ ձեռագիր, որոնցից մեկը գրված է 1476 թվականին, իսկ մյուսները՝ 1600-ական թվականների սկզբին և վերջին: Բոլոր աշխատություններն էլ թե՛ կառուցվածքային և թե՛ տեղումներով առումով ազդված են ոչ միայն հունարան, այլ և լատիներան քերականներից: Ձեռագրերի շարքում կան երկու այբբենարան, որոնք մանուկներին ուսուցանելու ձեռնարկ-դասագիրք են: 12 թվահամարը կրող ձեռագիրը ոչ միայն քերականական հատված ունի, այլ և կրոնական, բարոյակրթական, խրատական, աշխարհիկ բովանդակությամբ ընթերցարաններ: «Այբբենարանը» բաղկացած է հինգ մասից, որոնցից առաջինում խոսվում է քերականության որոշակի հասկացությունների՝ տառի, փաղառության, առոգանության, նշանագրերի, թվականի մասին: Միջևադարյան մյուս այբբենարանների համեմատությամբ քննության առարկա ձեռագիրն ունի մի շարք առավելություններ ու նորություններ. առաջինն այն է, որ այստեղ կրոնական բնույթի ընթերցարաններից բացի՝ կան նաև աշխարհիկ բովանդակությամբ նյութեր, երկրորդ՝ փաղառության ուսուցումը հեշտացնելու նպատակով այն բաժանված է որոշակի աստիճանակարգերի, «Այբբենարանի» նորություններից է նաև կետագրական նշանների ուսուցումը⁷: Իսկ ՄՄ 2448 թվահամարի ձեռագիրը նախորդից տարբերվում է շարադրանքով: Այն գրված է հարցու պատասխանի ձևով, որ այն ժամանակներում ընդունված էր հատկապես ձեռնարկ-դասագրքերում: ՄՄ 2276 և 2295 ձեռագրերը այս շարքում առանձնանում են իրենց ծավալով. նրանցից յուրաքանչյուրում բաժին առ բաժին խոսվում է ամեն մի քերականական երևույթի, խոսքի մասին և, առհասարակ, քերականական և գրչության արվեստների մասին: Առանձնացվում են անուն, դերանուն, բայ, ընդունելություն, հոդ, նախդիր, առբայ, շաղկապ խոսքի մասերը, իսկ շարահյուսության բաժնում քննվում է բայի, ընդունելության, հոդի, առբայի, շաղկապի և նախադրության շարադասությունը: ՄՄ 2281, 2286 և Չմամառի վանքի մատենադարանի 547 ձեռագրերում մանրամասն քննության են ենթարկված հնչյունաբանություն և ձևաբանություն բաժինները: Այս ենթաբաժնում իր յուրահատկությամբ առանձնանում է ՄՄ 2335 ձեռագիրը: Քերականական նյութը

⁷ Գասպարյան Մ., Մեսրոպյան այբբենարանները ժե-ժԸ դարերում, «Էջմիածին», ժե տարի, Ը, Էջմիածին, 1960, էջ 36:

մատուցվում է ծառերի պատկերներով: Քերականական ծառերում թվարկված են խոսքի մասերը իրենց տեսակներով, քերականական կարգերով, օրինակներով:

9. Հատվածական աշխատության և քերականական պատահիկներ: Աղբյուրների քննության այս բաժնում ներկայացնում ենք յոթ ձեռագիր մատյան՝ թվագրված ԺԴ-ԺԵ դարերով՝ ՄՄ 2018, 2274, 2279, 2307, 2366, 4149, 5619, որոնց քերականական նյութերի մի մասը հատվածական աշխատության են, մյուսներն էլ՝ քերականական պատահիկներ: Ձեռագրերում կա մեր ուսումնասիրությանն առնչվող շուրջ տասնհինգ հատվածական աշխատության և քերականական պատահիկ⁸, որոնք շարադրված են հարց ու պատասխանի ձևով և սովորական շարադրանքով, իսկ ՄՄ 5619 ձեռագրում քերականական պատահիկ նյութը ներկայացվում է ծառերի տեսքով: Հատվածական աշխատության ներկայացվում է ծառերի տեսքով: Հատվածական աշխատության ներկայացվում է ծառերի տեսքով: Հատվածական աշխատության ներկայացվում է ծառերի տեսքով: Հատվածական աշխատության ներկայացվում է ծառերի տեսքով: Հատվածական աշխատության ներկայացվում է ծառերի տեսքով:

Երկրորդ գլխում («Միջնադարյան ձեռագրերի լեզվաբանական տերմինների ձևափոխության քննություն») տերմինների ձևափոխության քննությունը կատարում ենք ըստ դրանց հայ տնիության աստիճանի⁹: Այս դասակարգումը հետաքրքիր է աղբյուրագիտական և տերմինների կիրառման ժամանակագրության տեսանկյունից: Ըստ հայ տնիության աստիճանի՝ տերմինները բաժանել ենք հետևյալ խմբերի.

- ա. նորահայ տերմիններ,
- բ. հայ տնի տերմինների վաղ կիրառության ներքին,
- գ. հայ տնի տերմինների՝ այլ իմաստով կիրառության ներքին,
- դ. հայ տնի տերմինների հնչյունական և բառակազմական նոր տարբերակներ:

Ձեռագրերում տերմինները ներկայացված են տարբեր կերպ՝ ա. տերմիններ՝ սահմանումով և օրինակներով, բ. տերմիններ՝ առանց սահմանման, միայն օրինակներով, գ. տերմիններ՝ առանց սահմանման և առանց օրինակի, պարզապես տերմինի անվան հիշատակության:

⁸ Հատվածական աշխատության ներքին ամբողջական ենք համարում, քանի որ ծաղկաբույս են արված ավելի ընդարձակ նյութերից՝ ըստ պատեհի կամ նպատակի, իսկ քերականական պատահիկները անավարտ նյութերի և ձեռագրի թերթերի կորստի հետևանքով առաջացած քերականական տեղեկության ներքին են, որի համար էլ թերթի ենք համարում:

⁹ Քննվող տերմինների մի մասը տալիս ենք լատիներեն նախադասություն հանդերձ, որոնք ճշտված են թղթման հետևանքով քերականության հիման վրա: Կարելի է ենթադրել, որ այդ գործը նախատիպ է ծառայել հայերեն որոշ ձեռագիր քերականության ներքին համար. Հմմտ. Tutte le Opere di Tommaso Campanella, Arnoldo Mondadori editore, Italy, 1954, pp.434-713:

Ա. Նորահայտ տերմիններ: Նորահայտ ասելով՝ նկատի ունենք բոլոր այն տերմինները, որոնք ներկայացվում են առաջին անգամ, դրանք արձանագրված չեն հատկապես տերմինաբանական և էզզվաբանական բառարաններում տերմինային արժեքով¹⁰: Այս բաժնում առանձնացրել ենք հարյուր հիսուներեք էզզվաբանական տերմին:

Բ. Հայտնի տերմինների վաղ կիրառություններ: Այս ենթախմբում բերվում են այն տերմինները, որոնք քերականագիտության մեջ արդեն այս կամ այն քերականի կողմից գործածված են, սակայն քննվող ձեռագրերը ժամանակային առումով նախորդում են այդ քերականների աշխատություններին և, մոսկանաբար, տերմիններն էլ դառնում են վաղ կիրառություններ: Այստեղ քննել ենք քսանվեց տերմին, որոնք ժամանակային առումով նախորդում են Կղեմես Գալանոսի, Ոսկաներևանցու, Բաղդասար Դպիրի, Մխիթար Սեբաստացու, Գաբրիել Ավետիքյանի, Միքայել Սալլանթյանի և այլոց կողմից գործածած տերմիններին:

Գ. Հայտնի տերմինների՝ այլ իմաստերով կիրառություններ: Էզզվական միավորների իմաստի փոփոխությունը պատմական երևույթ է, որը հայերենի զարգացման ընթացքում տարբեր դրսևորումներ է ունեցել: Էզզվաբանական տերմիններին առավել բնորոշ է բառիմաստի նորացումը կամ վերաիմաստավորումը, երբ նախկին իմաստերի փոխարեն տերմինը ձեռք է բերում նոր իմաստներ: Ընդ որում, նորի ձեռքբերումը չի ուղեկցվում հնի վերացմամբ: Էզզվաբանական տերմինների դեպքում նոր իմաստերի ձեռքբերումը պայմանավորված է տարբեր քերականների կողմից դրանց գործածումով: Ատենախոսության մեջ ներկայացրել ենք այլ իմաստով կիրառված տասնինը տերմին:

Դ. Հայտնի տերմինների հնչյունական և բառակազմական նոր տարբերակներ: Հանդիսանալ քերականագիտության մեջ նոր տերմիններ

¹⁰ Տերմինների նորահայտ լինելու հանգամանքը ստուգելու համար առաջ նորդվել ենք հետևյալ հրատարակությունների տվյալներով՝ Էզզվաբանական բառարան, ՆՅԲ (հտ. Ա-Բ), Բարսեղյան Յ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Հոփհաննիսյան Լ., Գրաբարի բառարան (Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր), Առաքել Սիւնեցի, Յաղագս քերականության համառատ լուծումը, «Բառարան», Եսայի Նչեցի, Վերլուծություններ քերականության, «Բառացանկ քերականական տերմինների և դժվարիմաց բառերի», Յովհաննես Երզնկացի, Հաւաքումն մեկնութան քերականի, «Բառարան», Յովհաննես Ծործորեցի, Համառատ տեսություններ քերականին, «Բառացանկ քերականական տերմինների և դժուարիմաց բառերի», Յովհաննես Զննեցի, Յաղագս քերականի, «Երկում վկայված քերականական տերմինների ցանկ», Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության տեսողման գործում, «Տերմինների այբբենական ցանկ», Ն. Ադոնց, Երկեր, հ. Գ., «Ցանկեանուանց և բառից»:

առաջանում են արդեն հայտնի տերմինների բառակազմակերպում կառուցվածքի կամ հնչյունակերպումի որոշակի փոփոխումներ: Այս ենթախմբում ներառված են այն բոլոր տերմին-ները, որոնք բերականական ձեռագրերում նմանատիպ փոփոխություններ են կրել: Առանձնացրել ենք այդպիսի փոփոխություններն արձանագրելու հիմնական տերմինները:

Երրորդ գլուխը («Միջնադարյան ձեռագրերում կիրառված լեզվաբանական տերմինների դասակարգում և կառուցվածքային քննություն») նվիրված է լեզվաբանական տերմինների կառուցվածքային-գործառնական դասակարգմանը, որտեղ ցույց ենք տալիս, թե յուրաքանչյուր տերմին բերականության բաժիններից որին է պատկանում: Պարզել ենք, որ տերմինների ընդգրկման ծավալը լայն է և վերաբերում է բոլոր բնագավառներին: Տերմինները քննել ենք նաև ըստ կազմության:

Այս գլխում տերմինները ներկայացնում ենք երկու ենթազխմբով:

Ա Լեզվաբանական տերմինների դասակարգում ըստ բերականության բաժինների: Այս ենթազխմբում պարզաբանվում է տերմինի պատկանելությունը բերականության որոշակի բաժնի՝ հնչյունակերպում-ըղարկական, բառակազմակերպման, ձևաբանական, շարահյուսական, կետադրական-առոգական-կան:

1. Հնչյունաբանական-ըղարկական տերմիններ:

Միջնադարյան միջանկյալ բերականներ անդրադարձել են գրչության արվեստին իրենց արժեքավոր աշխատություններում: Այդ աշխատություններից են Արիստակես Գրչի «Վերլուծությունը բացերեւալիս բազմազան բառից և բայից յոգնախումբ շարագրությունում արարեալ գսա Առիստակիսի Գրչի ի խնդրոյ բազմաց յարհեստ գրչութեան», Գևորգ Սկնռացու «Խրատ վասն հանգամանաց հեգից», «Խրատք վասն առոգանութեանց»¹¹, «Խրատ գրչութեան» երկերը¹²: Եթե Արիստակես Գրչին իր աշխատության մեջ հիմնականում քննում է հայերենի ըղարկության կանոնները, ապա Գևորգ Սկնռացին առաջ է քաշում նոր հարցեր՝ ամբողջական ուսմունք ստեղծելով վանկատման, տղարարածի, կետադրության և, մասամբ, առոգանության վերաբերյալ: Այս բնագավառում առանձնացրել ենք հետևյալ լեզվաբանական տերմինները՝ *եղանակագրութիւն (բերականության բաժիններից, որն ուսուցմանսիրում է գիրը, տառը իր տարատեսակներով), համաձայն (բաղաձայն), տարր (վանկ), տաժ փաղառութիւն (վանկի*

¹¹ Միջնադարում առոգանությունը ևս ուներ իր կարևորությունը, քանի որ գրչության արվեստը պահանջում էր նաև տիրապետել բառերի ուղիղ պատասխանությանը:

¹² Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-բերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, ՀՍՄԴ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջք 227-286, 288-307, 308-320:

տեսակ), իսկական փաղառու թիւն (վանկի տեսակ), փոքրավանգ (սակավանկ բառ կամ արմատ):

2. Բառագիտական-բառակազմական տերմիններ:

Բառագիտությունում ուսումնասիրում է լեզվի բառային կազմը, իսկ բառակազմությունը՝ բառերի տեսակ-ներն ըստ կազմության, բառերի բառակազմական կաղապարները, կազմության ձևերն ու եղանակները: Բառագիտությունում ու բառակազմությունում հնում ամանձին չեն ուսումնասիրվել, այլ ձևաբանության մաս են կազմել և քննվել խոսքի մասերի հետ: Ուսումնասիրություն շրջանակներում ձևաբանությունում ու բառագիտությունում բառակազմությունում բաժինները անջատ են քննում: Ըստ այդմ էլ այստեղ բերում ենք միայն բառագիտական-բառակազմական տերմինները, որոնք ձեռագրերում հետևյալներն են՝ պարզ արմատական բառերի համար ձեռագրերում գործածում են երկու նորահայտ տերմին՝ «առաջառոր անուն», «նախկնառոր անուն (նախկնառոր փոխանուն)», ածանցավորները կոչում էին «կրկնառոր անուն»: *Կրկնավոր անունն* էլ իր հերթին բաժանվում էր տեսակների և կոչվում համապատասխան ածանցի («գաղափար») անունով: Այդ տեսակներն են՝ *աղանդական գաղափար, կրկնական գաղափար, հայրական գաղափար, հպատակյան գաղափար, մարդական գաղափար, նախկնական գաղափար, պատկանական գաղափար, վերացելոյ գաղափար, օթական գաղափար*: Սրանցից գատ՝ ձեռագրերում կանա *կրկնածական անուն* տերմինը, որն անվանում է կրկնակի ածանցված բառերը: Այս տերմինների շարքում ամանձնացվում են բարդ բառերի հետևյալ տեսակները՝ *յոզնաբարդ՝* հարաբարդ, *կրկնաբարդ՝* կրկնաբարդադրիչ հարաբարդ անուն, *երեքկնաբարդ՝* եռաբարդադրիչ հարաբարդ անուն, *չորեքկնաբարդ՝* քառաբարդադրիչ հարաբարդ անուն: Այս բաժնում քննված նորահայտ տերմինների մեծ մասը անվանում են ածանցավոր բառերի զանազան տեսակներ:

3. Ձևաբանական տերմիններ:

Ձևաբանական տերմինները քերականության մյուս բաժինների տերմինների համեմատությամբ ձեռագրերում մեծ թիվ են կազմում: դրանց քանակը շուրջ հարյուր ինսուսու են, որոնք էլ ներկայացնում ենք ըստ խոսքի մասերի և դրանց քերականական կարգերի պատկանելության: Լեզվաբանական տերմինները ընդգրկում են գրեթե բոլոր խոսքի մասերը՝ անուն, բայ, դերբայ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ: Նշենք, որ ձեռագրերում մեծ քանակով նորահայտ տերմիններ կան ավելի ուշ շրջանում քերականագիտության մեջ ամանձնացվող ձայնարկություն նախքի մասից, որը ժե դարի ձեռագրերում կոչվում է «անյատ բան»:

4. Շարահյուսական տերմիններ:

Յայ քերականագիտության մեջ շարահյուսության քննությունը ձևաբանության համեմատ ավելի ուշ է սկսվում, որ պայմանավորված էր Դիոնիսիոս Թրակացու աշխատության կառուցվածքով և բովանդակությամբ,

